# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2025 թվականի N 0821-Ա

### "ԴԵԲԵԴԻ ԱՆՈՒՇԵՂԵՆ" ՓԲԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի դ. ենթակետի, հիմք ընդունելով «ԴԵԲԵԴԻ ԱՆՈՒՇԵՂԵՆ» ՓԲԸ-Ի տնօրենի լիազորված անձ՝ Տաթևիկ Աղաբաբյանի 2025 թվականի օգոստոսի 04-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.«ԴԵԲԵԴԻ ԱՆՈՒՇԵՂԵՆ» ՓԲԸ-Ի տնօրենի լիազորված անձ՝ Տաթևիկ Աղաբաբյանի /ՀՎՀՀ 06962205/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Դեբետ բնակավայրի 2 փ, շենք 2 հյուրատուն հասցեում (169 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի III, IV եռամսյակների (01.07.2025թ-31.12.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

06 օգոստոսի 2025
գ. Փամբակ